ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Միլան (Իտալիայի Հանրապետություն)

գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**

   Թամարա Թորոսյան,

   Ռուզաննա Պեպանյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության պետի տեղակալ,

   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և զբաղվածության վարչության զբաղվածության բաժնի պետ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Միլան (Իտալիայի Հանրապետություն), 2024 թվականի դեկտեմբերի 3-ից մինչև դեկտեմբերի 6-ը

   Հրավիրող կողմը.

   Եվրոպական հանձնաժողովի հարևանության ու բանակցությունների գլխավոր տնօրինություն և Եվրոպական ուսումնական հիմնադրամ

4. **Գործուղման նպատակը.**

   Մասնակցություն՝ հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածությանն աջակցելու վերաբերյալ միջազգային աշխատաժողովին (TAIEX Multi-Country workshop on supporting employment of persons with disabilities)

5. **Քննարկված թեմաները.**

Աշխատաժողովի ընթացքում քննարկումներն անդրադարձել են հիմնականում հետևյալ թեմաներին.

• Հաշմանդամություն ունեցող անձան զբաղվածության ապահոման ակտիվ պետական քաղաքականություններ տարբեր երկրներում, հատկապես՝ Իտալիայի հանրապետությունում ու առանձին տարածաշրջաններում,

• Զբաղվածության և ինտեգրման ծառայությունների կարողությունների հզորացում՝ նպատակ ունենալով մատուցել անհատականացված և ինտեգրված զբաղվածության ծառայություններ,

• Հստակ գործողությունների և կարծրատիպերի դեմ պայքարի միջոցով՝ հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի տեղավորման հեռանկարների խթանում.

• Աշխատավայրում խելամիտ հարմարեցման ապահովում.

• Հաշմանդամություն ունեցող անձանց կայուն զբաղվածության ապահովում.

• Հիվանդության կամ դժբախտ պատահարների դեպքում մասնագիտական վերականգնողական միջոցառումների ապահովումը՝ վաղ միջամտության, մասնագիտական կրթության և վերապատրաստման միջոցով:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Իտալիայի աշխատանքի և սոցիալական քաղաքականության նախարարության և Լոմբարդիայի տարածաշրջանի ներկայացուցիչները ծանոթացրեցին հաշմանդամություն ունեցող անձանց համար Իտալիայի Լոմբարդիա տարածաշրջանի աշխատաշուկայի իրավիճակին, հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության ապահովման քաղաքականության ընդհանուր մոտեցումներին, ինստիտուցիոնալ, տարածաշրջանային և ֆինանսական շրջանակներին, հաշմանդամություն ունեցող անձանց հմտությունների զարգացման և սոցիալական ինտեգրման գործընթացներին:

Այնուհետև Եվրոպական հանձնաժողովի Զբաղվածության գծով գլխավոր տնօրինության (DG EMPL: Directorate-General for Employment) ներկայացուցիչներն ու Աշխատողների գործունեության վերանայման և զարգացման (EPRD: Employee Performance Review and Development) հետազոտողները ներկայացրեցին

քաղաքականության մոտեցումները, մասնավորապես ԵՄ հաշմանդամների զբաղվածության փաթեթը և փոխանակման ֆոնդերի (exchange-traded funds ETF) պատվերով կատարված ուսումնասիրության նախնական արդյունքները:

Կազմակերպվեց խմբային քննարկում՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածությանն աջակցելու հիմնական մարտահրավերներ» թեմայի շուրջ, որի նպատակն էր զբաղվածության աջակցության արդյունավետության հիմնական գործոնների և լավ փորձի բացահայտումը: Խմբային քննարկման ընթացքում ներկայացվեցին նաև զբաղվածությանն աջակցող հաջորդական նախաձեռնությունների և լուծումների օրինակներ:

Այցելություն կատարվեց Կոմո քաղաքում գտնվող Կոմետա կենտրոն՝ հաշմանդամություն ունեցող երիտասարդների և մեծահասակների ինտեգրման պրակտիկ մոտեցումներին ծանոթանալու համար:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Աշխատաժողովի ընթացքում տարբեր երկրների հետ փորձի փոխանակման քննարկումներից պարզ դարձավ, որ հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության պահովման համար հիմնականում կիրառվում են նույն գործիքները տարբեր ընթացակարգերով: Մասնավորապես, աշխատանքի տեղավորման քվոտավորման համակարգ, սուբվենցիոն ծրագրեր՝ աշխատավարձի փոխհատուցման, եկամտահարկի փոխհատուցման, աշխատատեղի հարմարեցման, մասնագիտական ուսուցման և վերապատրաստման կազմակերպման ծրագրեր ու միջոցառումներ: Հատկապես կարևորվում են հաշմանդամություն ունեցող անձանց վարքագծի փոփոխմանն ու մոտիվացմանն ուղղված աշխատանքները, ինչպես նաև փափուկ հմտությունների տրամադրման կարճաժամկետ ուսուցումներն ու աշխատավայրում ուղեկցման աշխատանքները: Նշված գործիքների համալիր

կիրառության դեպքում է հնարավոր հասնել աշխատաշուկայում վերջիններիս ինտեգրման գործընթացի արդյունավետության բարձրացմանն ու նրանց կայուն զբաղվածության ապահովմանը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Թ. Թորոսյան

Ռ. Պեպանյան

11.12.2024